

## ՀԱՅԿԱԿԱՆ ՎՐԱԿԲԵՐ

### Ս. ԱՍՏՈՒԱԾԱՌԻՆ ՎԱՆՔ ԱՆԿԻՒՐԻՈՅ

**ՏԵՂԱԳՐԱԿԱՆ.** — Անկիւրիոյ Ս. Աստուածածին վանքը — յորջործուած նաև Կորմիր Վանք անունով — կը գտնուէր նոյն քողաքին հեւսիսային կողմէ, գրեթէ կը ժամառ հեռաւորութեամբ, ուր կը նստէր թեմին տատշնորդը:

**ՊԱՏՄԱԿԱՆ.** — ԺԵ. գարէն սկսեալ Ս. Աստուածածին վանքը կը տեսնուի պատմութեան թեմին քրայ, իբրև նատակայոր տատշնորդներու, որոնցմէ կրնանք յիշել հետեւուները:

1. — Ցափակի Եպիսկոպոս, 1441;
2. — Ներօք Եպիսկոպոս, 1447-1466;
3. — Նիկողոյոս Եպիսկոպոս, 1475-1485?;
4. — Սեփանոս Եպիսկոպոս, 1517;
5. — Վարդան Եպիսկոպոս, 1547-1570;
6. — Մարգիս Եպիսկոպոս, 1580?;
7. — Ցալոք Արեգակիկոպոս, 1621-22;
8. — Մարտիկ Վարդապետ, 1636;
9. — Մին ու Արք. Եղովիազի, 1641-

1675;

10. — Անիք ունու Արք. Զերունի, 1676-Ճ. 1691;
11. — Կառազես Արք. Զերունի, 1691-

1726;

12. — Անգեկաս Արք. Կ. Պոլսեցի, 1791-Ճ. 1807;
13. — Գրիգոր Արք. Գալատացի, 1808-

Ճ. 1811;

14. — Թադեաս Վեց. Շոլդունեան, 1812-1829:

**ՄԾԱԿՈՒԹԱՅԻՆ.** — Անկիւրիոյ Վանքին մէջ ալ անպակաս հզած են գրիչներ, որոնց գործերէն շտաբ կարսուած են ժամանակի ընթացքին, և այժմ ցանցառ թիւով ձեռագիրներ միայն կը գտնուին ձեռագրատուններէն ոմանց մէջ: Սուրբ Աստուածածին կամ Կարմիր Վանքի գրիչներուն շուրջ տեղեկութեանց գլխաւոր աղքարն է նոյն վանքի Զեռագրաց Յունակը, պատրաստուած կիւլէսէրեան Բար-

գէն Եպիսկոպոսի կողմէ, 1909-1913 թւականներուն, և յետ մանու տպուած Անթրիփոս 1957ին: Անուասիկ շարքը այդ գրիչներուն, ժամանակագրուան կարգով:

Գ. — Սահփանոս Արեղայ, Գրիչ, 1441ին օրիսակած է Անեսուած մը, Յակոբ Կրօնաւորի պատուէրուլ: Կողմէն՝ Արբորնամ Արեղայ (1442): — Զեռ. Անկիւրիոյ, թ. 178:

Բ. — Արքահամ Արեղայ, 1450ին օրիսակած է Գալաճարան մը, պարոն Ալաղանի խնդրունքով: — Զեռ. Անկիւրիոյ, թ. 221:

Գ. — Նիկոլաս Արեղայ, 1464ին օրիսակած է Մատոյ մը, պարոն Ալէքսանդր փափառքով: — Զեռ. Անկիւրիոյ, թ. 214:

Դ. — Մովսէս Գին., Գրիչ, որդի Յովհաննէս քահանայի, օրիսակած է,

1. — Մատոյ, 1546ին. — B. Nat. No. 60:

2. — Անեսուած, 1547ին. Ժալկող՝ վարպետ Յակոբ: Մատոց՝ Վարդան քնն., ապա եպիսկոպոս: — Զեռ. Անկիւրիոյ, թ. 180:

Ե. — Յակոբ Գրիչ, 1610ին օրիսակած է Աստուածունչ մը: — Ազգ. Հանդ., 1904, ԺԲ. Գիրք, Էջ 155: Արբարա, 1911, Էջ 846:

Զ. — Գրիգոր Սեբաստացի, Գրիչ, որդի Մարտիրոսի, օրիսակած է,

1. — Ժալվանու (Ժալուածք Շորտկանց, Աւայն), 1621ին, Ալշատուր Քահանայի համար: — Զեռ. Անկիւրիոյ, թ. 147:

2. — Անեսուած, 1622ին. — Ա. Արք. Միւրմէհան, Ճուշակ Զեռ. Հալէպի, Բ., Հալէպ, 1936, թիւ 20:

Է. — Մարգար Գրիչ, որդի Մկրտչի, 1622ին օրիսակած է Յուղմուարն մը, ժամանսի Մովսէսի փափառքով: — Զեռ. Անկիւրիոյ, թ. 192:

Ը. — Խաչատուր Լեհացի, Գրիչ, 1636ին օրիսակած է Անեսուած մը, Ղալաճուխցի անք Յակոբի համար: — Զեռ. Անկիւրիոյ, թ. 192:

Թ. — Խաչատուր Լեհացի, Գրիչ, 1656ին օրիսակած է մէկ Նարկան, Ս. Քառասունք Եկեղեցւոյ քահանայից փափառքով: — Զեռ. Անկիւրիոյ, թ. 177:

Ժ. — Թորոս Եպս. Համբեցի, Գրիչ, 1664ին օրիսակած է մէկ Խոհեկանքիւր,

**Նորընծայ Սրապիսոն քահանային համար.**  
— Զեռ. Անկիւրիսյ, թ. 229:

**ԺԱ.** — Աստուածատուր Սարկաւազ, Գրիչ, որդի Մորտաբրոս քահանայի, օրինակած է.

1. — Մասոց, 1666ին. — Զեռ. Անկիւրիսյ, թ. 207:

2. — Նուալան. 1667ին, Պր. Խոճո Պէկիի խնդրանքով. — Զեռ. Անկիւրիսյ, թ. 175:

**ԺԲ.** — Սարգիս Արդ. Թոխաթցի. աշակերտ Մընաւ Վարդապետի, իր անձին համար օրինակած է Տօնացոյ մը, 1675ին, որ հայրապետութեան քաջ բարունայ Մինաս Վարդապետին. — Զեռ. Ա. Յ. թ. 2344:

**ԺԳ.** — Սահակ Գրիչ, աշակերտ Խաչոսուր գպրի, չ. 1700ին օրինակած է Մելինուրին Կարուցիլեայց, Սարգիս Վարդապետի, Զեթունցի Կարապետ Վարդապետի համար. — Զեռ. Անկիւրիսյ, թ. 89:

**ԺԴ.** — Գէորգ Երէց, Գրիչ, որդի Մելքոն քահանայի, 1701(?)ին օրինակած է մէկ Յայսմաւուր. — Զեռ. Անկիւրիսյ, թ. 154:

**ԺԵ.** — Յովհաննէս բանասէր, Զեթունցի, 1703 - 1712, օրինակած է, մէկ Գրիչ Առաքինուրիսից, որ մաս կազմած է Երեք Հաւաքածոներու. — Զեռ. Անկիւրիսյ, թ. 95, 98 և 101:

**ԺԶ.** — Յովհաննէս Դագոնց, Զէյթունցի, Գրիչ, որդի Յակոբ Երիցու, աշակերտ Զեթունցի Կարապետ Մաքեպիսկոպոսի, չ. 1722ին օրինակած է,

1. — Խոհերդանուց. — Զեռ. Անկիւրիսյ, թ. 34:

2. — Քահանարան, Կարապետ Արքապիսկոպոսի համար. — Զեռ. Անկիւրիսյ, թ. 165:

**ԺԷ.** — Թագէոս Արկ. Գաղատացի, 1797ին օրինակած է Քարոզիլիք, Ա. Կիւրուկէց և Բ. Արրոց, Յ. Նալեսնի. — Զեռ. Անկիւրիսյ, թ. 14, 15:

**ԺԸ.** — Պետրոս Վրդ. Գաղատացի, 1797 - 1818, օրինակած է,

1. — Մելին. Սաղմոսացն Գաւրի, Ն. Լոմբրոնացւոյց. 1797ին. — Զեռ. Անկիւրիսյ, թ. 21:

2. — Քարոզիլիք (Ժողովածոյ), 1818ին. — Զեռ. Անկիւրիսյ, թ. 113:

**ԺԹ.** — Խաչատուր Դպիր = Յովհաննէս մըդ. Սայախնեան, Գաղատացի, 1816 - 1825, օրինակած է, 1815ին,

1. — Քարոզիլիք, և 2. — Մելին. Յովհաննու, Սաեցի Եփրեմ Վարդապետի. — Զեռ. Անկիւրիսյ, թ. 6:

3. — Բանի Ասկիականի, 1816ին, Թագէոս արքապիսկոպոսին համար. — Զեռ. Անկիւրիսյ, թ. 57:

4. — Հանոս Քերականուրին Պարսկերէն, չ. 1818. — Զեռ. Անկիւրիսյ, թ. 36:

5. — Մելինուրիւն Յովհաննու, Նահայի, չ. 1819. — Զեռ. Անկիւրիսյ, թ. 73:

6. — Հանաւուրին Մելինուրին Անտոնի Երգոյ Երգոյն, չ. 1820. — Զեռ. Անկիւրիսյ, թ. 5:

7. — Մելին. Երգոյ Երգոյն, Կարնեցի Յակոբ Վրդ. Սիմէսնեանի, 1824ին. — Զեռ. Անկիւրիսյ, թ. 7:

8. — Անտոն Նորազոյն Մածմուց, 1825ին. — Զեռ. Անկիւրիսյ, թ. 7:

9. — Պողոս Վրդ. Գաղատացի, 1817ին օրինակած է մէկ Սեր Ասոււծոյ, համառոտեալ Պողոս Վրդ. Ադրբանուալպուսեցիէն.

— Զեռ. Անկիւրիսյ, թ. 69:

10. — Մտեան Վրդ. Փորիազեան, 1819ին օրինակած է մէկ Քարոզիլիք, Մարազու Բարդ. Եպիսկոպոսի. — Զեռ. Անկիւրիսյ, թ. 55:

11. — Մատթէոս Վրդ. Գաղատացի, 1819 - 1823, օրինակած է,

1. — Քարոզիլիք, Բարդուղիմէի Մարազու Եպիսկոպոսի, 1819ին. — Զեռ. Անկիւրիսյ, թ. 8:

2. — Մելին. Երգոյ Երգոյն, Կարնեցի Յակոբ Վրդ. Սիմէսնեանի (1782), 1823ին. — Զեռ. Անկիւրիսյ, թ. 13:

12. — Մինաս Դպիր Գաղատացի, 1821 - 1823, օրինակած է,

1. — Մելին. Տեղեանն Եղեկիելի, Եպատի Վրդ. Նչեցիլի, 1821ին. — Զեռ. Անկիւրիսյ, թ. 4:

2. — Մելին. Խայտիայ, Կոգուիկ Յովհաննէս Վարդապետի,

3. — Քարոզիլիք, Ցիրատուր Վարդապետի, 1823ին. — Զեռ. Վիճնանայի, թ. 793:

Ն. ԱՐՔ. ԾՈՎԱԿԱՆ